Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 167 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է պետական միասնական գրանցամատյանի տեղեկություններից օգտվելու, ինչպես նաև իրավաբանական անձի կանոնադրության պատճենը տրամադրելու կարգը։

2. Պետական միասնական գրանցամատյանը, որը ձևավորվում է պետական գրանցամատյաններից, տեղեկություններ է պարունակում Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած բոլոր իրավաբանական անձանց (բացառությամբ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված սուբյեկտների) և պետական հաշվառում ստացած բոլոր անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց պետական հաշվառում ստացած բոլոր առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների մասին։

3. Պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները թարմացվում են յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում։

4. Պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար։

5. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական և մասնակի տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, պետական գրանցման տարին, ամիսը, օրը, իրավաբանական անձի պետական գրանցման համարը, հարկ

վճարողի հաշվառման համարը, իրավաբանական անձի հիմնադիրները), ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունները տեղադրվում են պետական ռեգիստրի ինտերնետային «www.e-regisetr.amե կայքում, որտեղ «այլ ծառայություններե պատուհանում տեղադրված է փնտրվող տեղեկությունն ստանալու մասին ուղեցույց։

6. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև իրավաբանական անձի կանոնադրության պատճենը, տրամադրվում են օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը կատարելուց հետո։

7. Պետական միասնական գրանցամատյանի մասնակի տեղեկությունները տրամադրվում են անվճար։

8. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը, մարդու իրավունքների պաշտպանին տրամադրվում են անվճար։

9. Պետական և տեղական մարմինները, իրավաբանական և ֆիզիկական անձինք պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները կարող են ստանալ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով։

10. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրվում են պարբերաբար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության խորհրդի համատեղ հրամանով սահմանված կարգով։

11. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին

տրամադրվում են պարբերաբար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի համատեղ հրամանով սահմանված կարգով։

12. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր (բացառությամբ սույն կարգի 10-րդ և 11-րդ կետերում նշված սուբյեկտների) իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը, մարդու իրավունքների պաշտպանին տրամադրվում են համապատասխան գրավոր հարցման առկայության դեպքում, հինգ օրվա ընթացքում՝ թղթային տարբերակով կամ էլեկտրոնային կրիչի վրա՝ առձեռն կամ փոստով, եթե իրավական ակտերով այլ կարգ սահմանված չէ։

13. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև իրավաբանական անձի կանոնադրության պատճենը ֆիզիկական և իրավաբանական անձանց, թղթային տարբերակով տրամադրվում են պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը և դիմումը պետական ռեգիստրի կենտրոնական մարմին կամ տարածքային բաժին ներկայացնելուց հետո, հինգ օրվա ընթացքում՝ առձեռն կամ փոստով՝ եթե դիմումում դրա մասին նշված է։

14. Պահանջվող տեղեկությունները կամ իրավաբանական անձի կանոնադրության պատճենն ստանալու համար դիմումում պետք է նշված լինի իրավաբանական անձի (անձանց) ճշգրիտ անվանումը և (կամ) անհատականացնող այլ տվյալներ (պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը)։

15. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանի մասնակի տեղեկությունները թղթային

տարբերակով տրամադրելիս՝ պետական ռեգիստրը պարտադիր նշում է պետական միասնական գրանցամատյանի արդիականացման վերջին օրը, ամիսը, տարին։

16. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև իրավաբանական անձի կանոնադրության պատճենը, ֆիզիկական և իրավաբանական անձինք էլեկտրոնային եղանակով կարող են ստանալ պետական ռեգիստրի ինտերնետային «www.stateregistry.amե կայքում տեղադրված գործիքներից որևէ մեկով՝ պետական տուրքի վճարումը կատարելուց հետո։ Պետական տուրքի վճարումը կատարելուց հետո պետական ռեգիստրն առցանց ռեժիմով ստուգում է պետական տուրքի վճարման հավաստիացումը, որից հետո տեղեկություն փնտրողը հնարավորություն է ստանում էկրանին բացված ցուցումներին համապատասխան գործողություններ կատարելուց հետո էկրանին ստանալ անհրաժեշտ տեղեկատվության պատկերը, որը կարող է տպագրել, փոխանցել կամ իր ընտրությամբ օրենքին չհակասող ցանկացած այլ ձևով օգտագործել։

17. Սույն կարգի 12-րդ կետում նշված սուբյեկտներն էլեկտրանային եղանակով պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկություններն էլեկտրոնային եղանակով պարբերաբար ստանալու համար գրավոր դիմում են ներկայացնում պետական ռեգիստրի ղեկավարին, ինչի արդյունքում դիմումն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում դիմող մարմնին տրամադրվում են համապատասխան քանակի օգտագործողի թույլտվություններ (ծածկանուն, գաղտնաբառ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համապատասխան համակարգչի վրա տեղակայվում է անվտանգության թվային սերտիֆիկատ), որից հետո սահմանված կարգով օգտվում են պետական ռեգիստրի ինտերնետային «www.e-regisetr.amե կայքից։

18. Պետական գրանցում կամ պետական հաշվառում ստացած անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց պետական հաշվառում ստացած առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկ-

ների մասին տեղեկությունները տրամադրվում են օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը կատարելուց հետո։

19. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց պետական հաշվառում ստացած առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրության պատճենները չեն տրամադրվում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ